

## ՄԱՍ 4.

ՀԱՅԱՍՏԱՆ.  
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ  
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2019թ.-ին

## **Գլուխ 7. Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականները**

Աղքատությունը բազմաբնույթ է և կարող է չափվել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ մոտեցումներով: Հայաստանում 2019թ.-ին բարեկեցության մասին սուբյեկտիվ գնահատականները (իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետները) 2.0 անգամ ցածր են օբյեկտիվ գնահատականներից (աղքատության մակարդակները գնահատվել են, համապատասխանաբար, 13.0% և 26.4%):

Իրենց ծայրահեղ աղքատ են համարել 1.0%-ը, ինչը մոտ է սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակին (1.4%):

### **7.1. Բնակչության կարծիքն իր կենսամակարդակի վերաբերյալ**

2019թ.-ի հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի անդամների կարծիքը կենսամակարդակի առաջնային խնդիրների վերաբերյալ:

#### **Աղյուսակ 7.1. Հայաստան. Տնային տնտեսությունների անդամների համար առավել առաջնային խնդիրները, 2019թ.**

*(տոկոսներով)*

| <b>Առաջնային խնդիրները</b>                     | <b>2019թ.</b> |
|--|---------------|
| Մննդի ապահովման խնդիր                          | 3.7           |
| Ոչ պարենային առաջնային կարիքներ                | 11.0          |
| Բնակարանային հիմնահարց                         | 15.4          |
| Երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու խնդիր | 3.8           |
| Առողջության խնդիր                              | 12.1          |
| Այլ  | 4.9           |

**Աղբյուրը.** *SSYULZ 2019թ.*

2019թ.-ին առավել առաջնային խնդիրներից նշվել են բնակարանային հիմնահարցը (15.4%), առողջության խնդիրը (12.1%) և ոչ պարենային առաջնային կարիքները (11.0%): Բնչպես նախորդ տարի, այնպես էլ 2019թ.-ին հարցվողների համար կարևոր հարցերից մեկը բնակարանային հիմնահարցն է (2018թ.-ին՝ 27.6%, 2019թ.-ին՝ 15.4%): 2019թ.-ին տնային տնտեսությունների 12.1% անդամների համար ամենաառաջնային խնդիրն առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունից զուրկ լինելն է: Հարցվողների 3.8%-ը որպես առաջնային խնդիր նշել է երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու անկարողությունը,

**Աղյուսակ 7.2. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը, 2008-2019թթ.**

(տոկոսներով)

|        | Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը |       |              |       |               |         |
|--------|---------------------------------------|-------|--------------|-------|---------------|---------|
|        | ծայրահեղ աղքատ                        | աղքատ | միջինից ցածր | միջին | միջինից բարձր | հարուստ |
| 2008թ. | 2.3                                   | 14.7  | 35.6         | 43.0  | 4.2           | 0.2     |
| 2009թ. | 2.9                                   | 15.0  | 37.3         | 41.3  | 3.4           | 0.1     |
| 2010թ. | 2.2                                   | 12.4  | 38.8         | 42.2  | 4.0           | 0.4     |
| 2011թ. | 2.1                                   | 13.3  | 38.2         | 43.2  | 3.1           | 0.1     |
| 2012թ. | 3.1                                   | 14.5  | 38.2         | 39.9  | 4.2           | 0.1     |
| 2013թ. | 3.3                                   | 14.7  | 40.7         | 36.6  | 4.6           | 0.1     |
| 2014թ. | 2.4                                   | 14.6  | 42.3         | 36.5  | 4.1           | 0.1     |
| 2015թ. | 1.9                                   | 13.7  | 45.1         | 36.1  | 3.2           | 0.0     |
| 2016թ. | 1.4                                   | 15.2  | 45.8         | 34.3  | 3.2           | 0.1     |
| 2017թ. | 1.1                                   | 12.0  | 41.8         | 41.8  | 3.2           | 0.1     |
| 2018թ. | 0.9                                   | 8.5   | 45.9         | 40.6  | 4.0           | 0.1     |
| 2019թ. | 1.0                                   | 12.0  | 43.9         | 40.0  | 3.0           | 0.1     |

Աղբյուրը. SSԿԱՀ 2008-2019թթ.

Թե որքանով են համընկնում կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, երևում է ստորև ներկայացված աղյուսակից, որտեղ տնային տնտեսությունների անդամները բաշխվել են ըստ սեփական կենսամակարդակին տրված իրենց իսկ գնահատականների և ըստ յուրաքանչյուր տնային տնտեսության անդամների համար հաշվարկված մեկ չափահասին համարժեք սպառման ագրեգատի, ինչին համապատասխան նրանք բաշխվել են՝ ըստ աղքատության մակարդակի:

**Աղյուսակ 7.3. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ (ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի) գնահատականները**

(%-ով՝ յուրաքանչյուր դեցիլային խմբի մեջ), 2019թ.

(տոկոսներով)

| Սպառման ագրեգատի դեցիլային խմբեր | Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը |       |              |       |               |         |
|----------------------------------|---------------------------------------|-------|--------------|-------|---------------|---------|
|                                  | ծայրահեղ աղքատ                        | աղքատ | միջինից ցածր | միջին | միջինից բարձր | հարուստ |
| <b>Հնդամներ</b>                  | 1.0                                   | 12.0  | 43.9         | 40.0  | 3.0           | 0.1     |
| այդ թվում՝                       |                                       |       |              |       |               |         |
| Առաջին դեցիլ                     | 6.3                                   | 28.5  | 43.0         | 21.9  | 0.3           |         |
| II                               | 1.0                                   | 16.1  | 44.0         | 35.1  | 3.8           |         |
| III                              | 1.8                                   | 15.2  | 50.5         | 31.5  | 1.0           |         |
| IV                               | 1.1                                   | 12.7  | 47.1         | 37.6  | 1.4           | 0.1     |
| V                                | 0.9                                   | 8.3   | 48.7         | 39.8  | 2.3           |         |
| VI                               | 0.0                                   | 10.4  | 46.8         | 41.2  | 1.6           |         |
| VII                              | 0.0                                   | 10.3  | 45.1         | 42.2  | 2.4           |         |
| VIII                             | 0.2                                   | 8.5   | 43.1         | 44.6  | 3.6           |         |
| IX                               | 0.1                                   | 10.1  | 35.9         | 49.5  | 4.0           | 0.4     |
| Տասներորդ դեցիլ                  | 0.2                                   | 5.4   | 38.6         | 47.8  | 7.9           | 0.1     |


Աղբյուրը. SSԿԱՀ 2019թ.

Նշում. Սպառումը հաշվարկվել է ըստ մեկ չափահասի սպառմանը համարժեք:

Չնայած արդյունքները հիմնականում համընկնում են, սակայն ընդհանուր աղքատության սուբյեկտիվ գնահատականն ավելի ցածր է, քան օբյեկտիվը: Իրեն աղքատ է համարել (չհաշված ծայրահեղ աղքատներին) բնակչության 12.0%-ը: Միննույն ժամանակ բնակչության 1.0%-ն է իրեն գնահատել ծայրահեղ աղքատ, ինչը մոտ է մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ծայրահեղ աղքատ գնահատված բնակչության ցուցանիշին՝ 1.4%: Հետաքրքիրն այն է, որ իրենց կենսամակարդակը միջինից բարձր գնահատած բնակչության տեսակարար կշիռը կազմել է 3.0%, և բնակչության միայն 0.1%-ն է իրեն հարուստ համարել:

Գծապատկեր 7.1-ում հետազոտված տնային տնտեսությունները բաշխվել են ըստ իրենց կենսամակարդակին տրված գնահատականների և ըստ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության մակարդակի:

**Գծապատկեր 7.1. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, 2019թ.**



Աղբյուրը. *SS4UL2 2019թ.*

Հարցման մասնակիցների պատասխաններն այն հարցին, թե ամսական մեկ շնչի հաշվով որքան գումար է անհրաժեշտ լավ և շատ լավ ապրելու կամ գոյատևելու համար, ըստ 2019թ. հետազոտությունների արդյունքների, բերվում են ստորև.

**Աղյուսակ 7.4. Հայաստան. Տնային տնտեսությունների տեսակետը՝ շատ լավ, լավ ապրելու համար և ծայրը ծայրին հասցնելու անհրաժեշտ անվանական ամսական գումարի չափը (մեկ շնչի հաշվով), 2019թ.**

|                       | ՀՀ դրամով | ԱՄՆ դոլարով |
|-----------------------|-----------|-------------|
| Շատ լավ ապրելու համար | 475 922   | 991         |
| Լավ ապրելու համար     | 157 955   | 329         |
| Գոյատևելու համար      | 67 224    | 140         |

Աղբյուրը. *SS4UL2 2019թ.*

## 7.2. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայությունների որակից

Հետազոտության ընթացքում պարզվել է հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների տեսակետը՝ տարբեր հաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վիճակի վերաբերյալ: Աղյուսակ 7.5-ում ներկայացված է հարցման մասնակիցների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից: Աղյուսակից երևում է, որ 2019թ.-ին տնային տնտեսությունները հիմնականում բավարարված են էլեկտրաէներգիայի մատակարարումից (97.7%-ը վկայել է այդ մասին): Բավարարվածության աստիճանը բարձր է նաև փոստի ծառայություններից 96.3%, ջրահեռացման ծառայությունից՝ 94.6%, ջրամատակարարման ծառայությունից՝ 89.6% և աղբի հավաքումից՝ 82.3%: Մինևույն ժամանակ տնային տնտեսությունների մի մասն անբավարարվածություն է հայտնել հասարակական տրանսպորտի (23.9%), առողջապահության (19.8%), աղբի հավաքման (17.3%), բանկերի աշխատանքի (12.7%), և ջրամատակարարման ծառայություններից (10.2%):

### Աղյուսակ 7.5 . Հայաստան. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից, 2018 և 2019թթ.

(տոկոսներով)


| Վճարովի ծառայությունների անվանումը | Բավարարված են |        | Բավարարված չեն |        | Դժվարացել են պատասխանել |        |
|------------------------------------|---------------|--------|----------------|--------|-------------------------|--------|
|                                    | 2018թ.        | 2019թ. | 2018թ.         | 2019թ. | 2018թ.                  | 2019թ. |
| Ջրամատակարարում                    | 87.3          | 89.6   | 12.3           | 10.2   | 0.4                     | 0.3    |
| Ջրահեռացում                        | 76.5          | 94.6   | 11.7           | 4.9    | 11.8                    | 0.5    |
| Աղբի հավաքում                      | 78.7          | 82.3   | 19.6           | 17.3   | 1.7                     | 0.3    |
| Հեռախոս ստացիոնար                  | 49.2          | 96.7   | 4.9            | 1.4    | 45.9                    | 1.9    |
| Էլեկտրաէներգիայի մատակարարում      | 98.9          | 97.7   | 0.9            | 2.2    | 0.2                     | 0.1    |
| Փոստ                               | 73.5          | 96.3   | 2.5            | 1.4    | 24.0                    | 2.3    |
| Բանկերի աշխատանք                   | 73.7          | 86.1   | 6.6            | 12.7   | 19.7                    | 1.2    |
| Առողջապահություն                   | 62.3          | 78.1   | 21.4           | 19.8   | 16.3                    | 2.1    |
| Կրթություն                         | 54.9          | 85.1   | 11.1           | 10.5   | 34.0                    | 3.6    |
| Հասարակական տրանսպորտ              | 72.1          | 75.9   | 19.5           | 23.9   | 8.4                     | 0.2    |

Աղբյուրը. 2018 և 2019թթ. SSՀԱՀ

Գծապատկերներ 7.2-ում ներկայացված են 2019թ.-ին ծառայությունների մատուցման մեջ կատարված բացասական փոփոխություններն առավել մանրամասն:

**Գծապատկեր 7.2. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված բացասական փոփոխությունները, 2019թ.**

*(տոկոսներով)*



Աղբյուրը. SSԿԱՀ 2019թ.

Համաձայն 2019թ.-ի SSԿԱՀ արդյունքների, ծառայությունների մատուցման գործում արձանագրված ամենաբացասական տեղաշարժերը գրանցվել են, աղբահանության (17.0%), առողջապահության (10.1%), կրթության (9.0%) և հասարակական տրանսպորտի (8.4%) ոլորտներում (Գծապատկեր 11.2):

Ծառայությունների որակի վատացման դեպքում, հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների փոքր մասն է դիմել համապատասխան ծառայությունների ղեկավարությանը: Աղյուսակ 7.6-ում ներկայացված են ծառայությունների որակի վատացում արձանագրած բնակչության ձեռնարկած քայլերը և ստացված արդյունքները: Ինչպես երևում է աղյուսակից, բնակչությունը բավական հազվադեպ է դիմում մատուցվող ծառայությունների որակի բարելավման հայցով:

Բացի քանակական տվյալներից, շատ կարևոր են որակական տվյալները: Այսպես օրինակ, ղեկավարության կողմից ընթացք է տրվել բանկային ծառայությունների մատուցման հետ կապված վատ աշխատանքի վերաբերյալ դիմումների՝ 44.6%-ին, առողջապահության ծառայությունների 39.9%-ին, խմելու ջրի մատակարարման դեպքում՝ 41.1%-ին, հասարակական տրանսպորտի՝ 17.1%-ին:

**Աղյուսակ 7.6. Հայաստան. Ծառայությունների որակի վատացման դեպքում դիմելը համապատասխան  
ծառայությունների ղեկավարությանը, 2018 և 2019թթ.**

*(տոկոսներով)*

| Վճարովի ծառայությունների<br>անվանումը | Գրանցվել է<br>մատուցվող<br>ծառայության որակի<br>փոփոխություն |        | Չեն դիմել<br>ղեկավարությանը<br>ծառայության որակի<br>վատացման դեպքում |         | Դիմելու դեպքում<br>ղեկավարությունը ձեռնարկել է<br>որոշակի քայլեր իրավիճակը<br>բարելավելու համար |         |
|---------------------------------------|--|--------|--|---------|---|---------|
|                                       | 2018թ.   | 2019թ. | 2018 թ.  | 2019 թ. | 2018 թ.   | 2019 թ. |
| Ջրամատակարարում                       | 1.9  | 7.8    | 97.0   | 27.3    | 22.0  | 41.1    |
| Ջրահեռացում                           | 1.0  | 2.4    | 98.9   | 97.8    | 64.7  | 70.7    |
| Աղբի հավաքում                         | 4.2  | 17.0   | 97.3   | 97.9    | 9.1   | 49.2    |
| Հեռախոս ստացիոնար                     | 0.2  | 3.0    | 99.4   | 97.4    | 97.3  | 96.6    |
| Էլեկտրաէներգիայի<br>մատակարարում      | 0.5  | 2.7    | 97.3   | 96.8    | 94.6  | 93.3    |
| Փոստ                                  | 0.2  | 3.1    | 99.5   | 99.6    | 97.2  | 64.7    |
| Բանկերի աշխատանք                      | 0.6  | 5.0    | 99.8   | 99.2    | 13.8  | 44.6    |
| Առողջապահություն                      | 5.3  | 10.1   | 99.7   | 99.2    | 31.7  | 39.9    |
| Կրթություն                            | 3.5  | 9.0    | 99.9   | 99.3    | 73.7  | 44.8    |
| Հասարակական տրանսպորտ                 | 3.1  | 8.4    | 98.6   | 98.0    | 5.9   | 17.1    |

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008 և 2019թթ*